ԼԻՆԵԼ ԿԻՆ՝ ԴԺՎԱՐ Է, ԼԻՆԵԼ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԻՆ՝ ԱՌԱՎԵԼ ԴԺՎԱՐ



Ասում եմ՝ կյանքում պատահականություններ չեն լինում, և դա իրոք այդպես է: Ես համոզված եմ, որ տիկին Անահիտի հետ հանդիպումը պատահականություն չէր, այլ վերևից տրված նախանշան, որ երբեք չպետք է հրաժարվեմ իմ բաղձալի տենչանքից, և որ ամեն գնով անհնարինը հնարավոր դարձնելով՝ պիտի հասնեմ այն բարձունքին, որտեղ ինձ լիարժեք եմ զգում...Իմ զրուցակիցը հենց նա է. Արցախի ժողովրդական արտիստ, պարուհի, երգչուհի, Արցախի «Մենք ենք մեր սարերը» համույթի մենակատար Անահիտ Հովսեփյանը: Արժանացել է մի շարք պատվոգրերի, իսկ 2018թ-ին ԱՀ նախագահ Բակո Սահակյանի կողմից՝ «Վաստակավոր արտիստ» կոչմանը:

-Տիկի՛ն Անահիտ, ո՞ր տարիքից եք սկսել երգել, և ի՞նչը Ձեզ տարավ դեպի արվեստը:

-Արվեստն իմ ընտանիքն էր. հայրս զուռնա-դուդուկ էր նվագում, իսկ եղբայրս՝ դհոլ: Դեռ մանկուց երգել եմ Կարմիր Շուկայի ինքնագործ խմբում, մասնակցել շրջանային օլիմպիադաներին, արժանացել գովասանագրերի: 10 տարեկանում ք.Ստեփանակերտից հրավիրեցին ձայնագրման, և ռադիոյով ես լսեցի իմ գրած նյութը մեր խմբի մասին ու իմ ձայնագրած երգը: Եվ դա ինձ համար վճռորոշ եղավ...

-Խնդրում եմ պատմեք Ձեր կենսագրական ամենահիշարժան դեպքի մասին:

-Փոքր տարիքում մեծ սև թթենի ունեինք, ես բարձրանում էի նստում ծառին և երգում այնքան բարձր, որ ամբողջ գյուղն ինձ էր ունկնդրում: Ու մեկ էլ տեսնում էի այս ու այն կողմից ասում էին. «Կեցցե՛ս, Անահիտ, մեկն էլ ասա, մեկն էլ ասա, ապրես...»: Այդ դեպքն ամենատպավորիչն ու ամենահիշարժանն էր կյանքումս, այն երբեք չեմ մոռանում:

-Լինել կին՝ դժվար է, լինել ճանաչված կին՝ առավել դժվար: Ի՞նչ դժվարությունների եք հանդիպել կյանքում, և երբ հիասթափվել եք, ի՞նչն է Ձեզ ոգեշնչել:

-Արվեստում կին լինելը շատ դժվար է, հատկապես, երբ օգնող ձեռք չես ունենում: Ամիսներով հյուրախաղերի էինք լինում, և այդ ժամանակ ինձ օգնել են մեր ծնողները, ես նրանց անչափ երախտապարտ եմ: Ամեն դժվարությունից ու հիասթափությունից հետո իմ ոգեշնչման աղբյուրը երգն է եղել: Նրա հետ մոռանում եմ ամեն մի ցավ, հոգնածություն ու լրիվությամբ լցվում եմ բեմի էներգետիկայով: Բեմը իմ տարերքն է, իմ կյանքն է, իմ անցյալն ու ապագան:

-Ի՞նչ խորհուրդ կտաք մեր այսօրվա արվեստասեր երիտասարդներին:

-Արվեստասեր, շնորհաշատ երիտասարդներին խորհուրդ եմ տալիս, որ չթաքցնեն իրենց տաղանդը, այլ ձգտեն այն հասցնել կատարելության և ոչ մի դժվարությունից չընկճվեն, այլ նոր ուժ ստանան և հաղթական քայլերով ընթանան առաջ:

-Քանի որ մեր ընթերցողների մեծ մասը երիտասարդությունն է, ի՞նչ կուզեիք ասել նրանց:

-Ամենակարևորը՝ նրանց քաջառողջություն եմ մաղթում, գլխապտույտ հաջողություններ, բարի ուսում, երջանկություն, նպատակասլացություն, թող յուրաքանչյուրը հասնի իր բաղձալի նպատակներին...

-Տիկի՛ն Անահիտ, շնորհակալություն Ձեզ զրույցի համար և որպես Արցախի այա, որպես Նախշուն բաջի՝ Ձեր օրհնանքը՝ մեր ընթերցողներին.

-Աստված օրհնե ծրգ, ա՛ ժողովուրդ,
Տաշտըտ հացավ լիգյը ինի,
Տոնըտ լիգյը բալա ինի,
Երգիրը միշտ խաղաղ ինի,
Ըստուծեն սերն էլ ծրգ հալալ ինի:

Հարցազրույցը՝ Ալիսիա Դադայանի,
մաթեմատիկա 2-րդ կուրս

«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՋՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Աննա Ահարոնյան
Լրագրություն 3-րդ կուրս
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Քո ժամանակը

№ 2
ՄԱՐՏ
2019

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Կանանց միջազգային օրը նշվում է ամեն տարի մարտի 8-ին: Տարբեր տարածաշրջաններում տոնակատարությունների հիմքում ընկած է կանանց նկատմամբ հարգանքը տնտեսական, քաղաքական և հասարակական ոլորտներում նրանց ձեռքբերումների համար: Եվ ոչ միայն: Հայ կինը միշտ էլ եղել է ներշնչման աղբյուր արվեստագետների համար, պաշտամունք՝ մայրությունը երկրպագողների համար: Օրվա առթիվ ԱրՊՀ ուսանողներն իրենց շնորհավորանքներն են հղում մարդկության գեղեցիկ կեսին:

***

Սիրելի՛ կանայք եվ աղջիկներ, մայրեր և տատիկներ, սրտանց շնորհավորում եմ բոլորիդ գարնանային միամսյակի առիթով: Ցանկանում եմ ձեզ երջանկություն, առողջություն և բազում հաջողություններ, լինե՛ք արժանվույնս գնահատված և սիրված, քանի որ դուք ձեր հմայքով ու նրբությամբ էլ ավելի եք գեղեցկացնում աշխարհը:

Օհանջանյան Մարիամ,
լրագրություն 1-ին կուրս

Կինն է ընտանիքի հիմքը, հեռայությունը: Մարտի 8-ը տոնացույցում լավագույններից է և ամենասպասվածը: Շնորհավորում եմ բոլոր կանանց, աղջիկներին՝ գարնանային այս լուսավոր տոնի կապակցությամբ, մաղթում եմ միայն գեղեցիկն ու բարին, միշտ եղե՛ք համարձակ ու անկոտրում, պայքարե՛ք հանուն ձեր իրավունքների, ժպտացե՛ք և առաջ նայե՛ք:

Սիրանուշ Ադամյան,
լրագրություն, 1-ին կուրս

***

Սիրելի՛ դասախոսներ, ուսանողներ, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ մարտի 8-ի՝ կանանց տոնի կապակցությամբ: Կնոջ, աղջկա նկատմամբ հարգանքն ու սերը դարերի խորքից է գալիս: Դրա ակունքները կանանց գեղեցկությունն ու քնքշանքը չեն միայն:

Մաղթում եմ ձեզ անձնական հարատև երջանկություն, առողջություն, սեր եւ բեղմնավոր գործունեություն: Թո՛ղ ի կատար ածվեն ձեր բոլոր նվիրական երազանքները: Թո՛ղ ձեր կյանքում պակաս կարևոր տեղ չունենան մասնագիտական ու աշխատանքային հաջողությունները, մեր անկախ երկրի արժանապատիվ քաղաքացի լինելու ձգտումը:

Լիլիթ Մարգարյան,
հ. լեզու և գրակ. 3-րդ կուրս

***

Ամեն մեկդ մի բուռ արև, ամեն մեկդ մի փունջ ժպիտ... ԱրՊՀ գեղեցիկ սեռի սիրելի՛ ներկայացուցիչներ, ի սրտե շնորհավորում եմ բոլորիս՝ գարնան այս գեղեցիկ տոնի առթիվ և մաղթում վառ ու լուսավոր, երջանիկ ու սիրով լի, անհոգ ու աներևակայելի սքանչելի օրեր: Գարունն իր հետ բերեց լույս, հավատ ու լավատեսություն, իսկ մեզ մնում է միայն լցվել գարնան շնչով ու ձգտել երջանկության: Թո՛ղ գարնան ծաղիկների հետ ծաղկեն ձեր հոգիները, ու թո՛ղ միշտ ձեզ ուղեկից լինի գարնան բույրը:

Անի Հակոբյան,
տեղ.տեխն. 3-րդ կուրս

Ջերմորեն շնորհավորում եմ գեղեցիկ սեռի բոլոր ներկայացուցիչների մարտի 8-ը: Մաղթում եմ հարատև գեղեցկություն, քաջառողջություն, անսպառ ժպիտներ և հաճելի արկածներով լի կյանք:

Ֆլորա Հայրապետյան,
անգլ.լ.և գրակ. 3-րդ

* * *

Շնորհավորում եմ գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին կանանց միջազգային տոնի և մի-

ամսյակի կապակցությամբ: Մաղթում եմ, որ մնաք գարնան նման անուշաբույր, մոգական ու առեղծվածային: Լինեք ազգային արժեքների նվիրյալներ, երբեք չկորցնեք հայ կնոջ ազգային կերպարը: Եղե՛ք երջանիկ ու առողջ, հաջողակ ու հավատարիմ:

Գարիկ Հակոբյան,
իրավ. 4-րդ կուրս

***

Շնորհավորում եմ մայրերին ևս մեկ անգամ մեծարելու օրը. մաղթում եմ երջանկություն և բարձր տրամադրություն, գարնան բուրավետ ծաղիկների պես լինեք միշտ քնքուշ, գեղեցիկ և հմայիչ, լինեք աստղերի պես պայծառ, արևի պես ջերմ ու հավերժ երիտասարդ: Թող ձեր հոգում գարնանային ժպիտներ լինեն:



Արման Հայրապետյան
իրավ. 4-րդ

* * *

Սրտանց շնորհավորում եմ աշխարհի բոլոր կանանց՝ տոնի կապակցությամբ: Ցանկանում եմ միայն ու միայն բարին, հավերժական գե-

ղեցկություն, անչափ սեր, եղե՛ք միշտ սիրված ու գնահատված շրջապատի կողմից: Շնորհավոր մարտի 8, մա՛մ, ուզում եմ, որ արագ ապաքինվես, և քո գեղեցիկ աչքերի փայլը անպակաս լինի իմ կյանքից....

Կարինե Բաղդասարյան,
ֆիզիկա 3-րդ կուրս

***

Dear women! May you stay amazingly attractive, healthy and wealthy forever and ever! This day is devoted to you for your Grace, Beauty, Charm and Intelligence. Feel special, unique

and on the top of the world!!! Women are always a source of inspiration for the family and the society. Happy Women's day to you!

Վիտալի Պետրոսյան,
թարգմ.գործ 2-րդ կուրս

Պատրաստեց՝
ԱՆՆԱ ԱՀԱՐՈՆՅԱՆԸ
Լրագրութ. 3-րդ կուրս

ԽՈՍՏՈՒՄՆԱԼԻՑ ԱՊԱԳԱՅՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

Բնագիտական ֆակուլտետի աշխարհագրություն մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Արթուր Աբրահամյանը բուհի լավագույն ուսանողներից է, ով միաժամանակ արդեն դասավանդում է նաև դպրոցում: Ձեզ ենք ներկայացնում նրա հետ ունեցած մեր զրույցը:

-Արթուր, ինչպե՞ս ես կատարել մասնագիտական ընտրությունդ:

-Հայ ազգը, սերելով դարերի խորքից, անընդհատ ծգտել է համախմբվել տարածաժամանակային առումով: Արդյունքում ունենք մի պատկեր, ինչը բոլորիս է հայտնի: Ուստի Հայոց արևելից կողմերից մեկի՝ Արցախ աշխարհի պատմական փաստերի առջև այսօր ես և իմ սերունդն ունենք ինչպես մասնագիտական, այնպես էլ քաղաքական պատասխանատվություն: Այդ պատասխանատվությունն ինչ-որ տեղ ինձ համար դարձավ մասնագիտական կողմնորոշման պատճառ: Այո՛, դա մեծ ուժ է և գոյություն ունի հայի արյան մեջ: Դա հայագիտությունն է, իսկ դրա մի մասն աշխարհագրությունն է:

-Ինչպե՞ս եք համատեղում ուսանողական կյանքն ու մանկավարժական գործունեությունը: Որտե՞ղ եք հիմա դասավանդում:

- Մտնելով բուհ՝ դառնում ես ուսանող, ով դեռևս շատ բան ունի ընդօրինակելու դասախոսական կազմից: Տեղափոխվելով դպրոց՝ քեզ զգում ես որպես մանկավարժ և գիտակցում, որ այս դեպքում էլ մատաղ սերնդի կրթության և դաստիարակության պատասխանատուն ես: Այժմ դասավանդում եմ Մարտունու շրջանի Խերխանի հիմնական և Ասկերանի շրջանի Ծաղկաշատի միջնակարգ դպրոցներում: Մանկավարժական աշխատանքը գերակշռում է աշխատանքային օրվա առաջին կեսում, իսկ ուսանողական կյանքը՝ երկրորդ կեսում:

-Ինչպիսի՞ն է աշխարհագրագետի աշխատանքը: Ո՞ր բնագավառներում է այն անհրաժեշտ:

-Այսօր աշխարհագրագետի աշխատանքը միօրինակ չէ, այլ անցյալի վերհուշ, տեսակետների ընդհարում, հաստատում ու մերժում, ապրած ժամանակի դեպքերին զուգընթաց՝ նաև ըմբոստացում: Գիտությունների դասակարգման սխեմայում միակ առարկան աշխարհագրությունն է, որը հավասարապես ուսումնասիրում է մարդ-բնություն-հասարակություն եռամիասնական կարևորագույն օղակը:

-Մագիստրանտ, մանկավարժ: Այս ամենից զատ գիտեմ, որ զբաղվում եք նաև գիտահետազոտական աշխատանքով: Ձեր տպագրված հոդվածները և աշխատանքները ի՞նչ թեմաներ են ընդգրկում:

-Գիտահետազոտական գործունեությունն ընդգրկում է Արցախի գիտական կենտրոնի կողմից թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում ընտրված «ԱՀ գյուղական բնակավայրերի սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները» թեման: Տպագրված 5 գիտական հոդվածները հիմնականում վերաբերում են Արցախի ժողովրդագրական առանձնահատկություններին, բնակչության տարաբնակեցման համակարգերի ուսումնասիրությանը, աշխարհագրության դասավանդման մեթոդիկային և այլն:

-Կարևոր է, որպեսզի երիտասարդ-մասնագետը նորություն ներմուծի իր գիտական ոլորտ: Դուք՝ որպես ուսանող և՛մանկավարժ՝ ձեր աշխատանքով ինչ բերեցիք այդ դաշտ:

Իմ կարծիքով գիտական ոլորտ նորություն ներմուծելու համար միայն որևէ մասնագիտության տիրապետելով հնարավոր չէ: Դա պետք է կատարվի միջառարկայական և ներառարկայական կապերի խորացման, յուրաքանչյուր ոլորտի (նույնիսկ առաջին հայացքից կապ չունեցող) մանրագնին ուսումնասիրման և փոխադարձ կապերի եզրեր գտնելու հետ: Ես՝ որպես երիտասարդ մասնագետ, իմ ուսումնասիրությունները կատարում եմ հենց այդ սկզբունքով, որպեսզի ուսումնասիրման հորիզոնից որևէ բաց կողմ չմնա:

-Ըստ քեզ՝ ի՞նչ է պետք սկսնակ երիտասարդ գիտնականին՝ գիտական աշխատանքի հետազոտման ու որպես այդպիսին՝ կայացման գործում:

-Սկսնակ գիտնականին անհրաժեշտ են այնպիսի խթանման միջոցներ, որոնց դեպքում նա կզգա իր կատարած աշխատանքի, իր գիտական ներդրումի որակական արժեքը, իրեն մեկուսացված չզգա: Սրանք այնպիսի գործընթացներ են, երբ երիտասարդ մասնագետն ավելի է ինքնաբացահայտվում, հպարտանում... Նոր աշխատանք կատարելու, ուսումնասիրելու, մասնագիտապես կատարելագործվելու երազանքը դառնում է արժեքավոր և գնահատված:

-Ինչպե՞ս եք տեսնում Արցախում երիտասարդ գիտնականների առջև ծառացած հիմնական խնդիրների լուծման ճանապարհը:

-Արցախում երիտասարդ գիտնականների առջև ծառացած խնդիրների լուծումը գտնվում է պետական քաղաքականության դաշտում: Մի դեպքում երիտասարդ գիտնականի կողմից փաստված թեման արդիականություն և տարբեր ոլորտներում կիրառելիություն է ներկայացնում, մյուս դեպքում պետական կառավարման համակարգը գրեթե չի օգտագործում այդ հնարավորությունները: Խնդրի լուծումը ես տեսնում եմ պետական ծրագրերի կազմման ժամանակ թույլ և ուժեղ կողմերի քննարկումը, որտեղ առկա ռիսկայնությունը հենվի նախապես ձևավորված հետազոտական խմբի մասնագիտական վերլուծության հիման վրա:

-Որպես ապագա մասնագետ՝ ինչպիսի՞ դրական միտումներ եք տեսնում Արցախի պատմաաշխարհագրական ոլորտում:

-Արցախի պատմաաշխարհագրական դաշտը պահպանելու և սերունդներին փոխանցելու խնդիր ունի: Այժմ այս ոլորտին հատկացվող ներդրումների շնորհիվ շարունակաբար ուսումնասիրվում են նյութական և հոգևոր մշակութային արժեքները, ընդլայնվում է պետության պահպանության ներքո գտնվող հատուկ կարգավիճակ ունեցող տարածքների (բնության հուշարձան, արգելավայր, արգելոց և այլն) մասշտաբը, կատարվում է քարտեզագրում, թարմացվում են զբոսաշրջային երթուղիների ցանկը և այլն: Այս ոլորտի հեռանկարը Արցախի միջազգային ճանաչման տեղեկատվական հարթակ կարելի է համարել:

-Արցախու՞մ եք պատկերացնում Ձեր մասնագիտական ապագայի հեռանկարը:

-Այժմ, այն կարծիքը, թե օտար երկրներում մասնագիտական աճը կայուն է և արդյունավետ, քան Արցախում, ինքնակրթության տեսակետից՝ այլ պատկեր է: Արդի ժամանակներում տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները լրացնում են գրեթե ամեն ինչ: Մասնագիտական ձեռքբերումները ստացել եմ Արցախում, իսկ դրա աճի հեռանկարը ևս Արցախն է:

-Ձեր կարգախոսը կյանքում:

-Իմաստ չունի այն աշխատանքը, եթե ամբողջությամբ չես նվիրվելու դրան:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
Անահիտ ՀԱԿՈԲՅԱՆԻ

ԵՐԿՐԻ ԱՊԱԳԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԵՐՈՒՄ Է

Երիտասարդությունը կյանքի ամենաերանելի շրջանն է, ուստի այն պետք է ապրել այնպես, որ կարողանաս հասնել նախանշած նպատակներիդ: Իսկ թե ինչպես են վայելում իրենց երիտասարդությունը Արցախի երիտասարդները, փորձեցինք պարզել լրագրություն 2-րդ կուրսի ուսանողուհի Էլինա Հակոբյանի հետ զրույցի միջոցով:

- Ողջույն, Էլինա, կարո՞ղ ես երկու խոսքով նկարագրել, թե ինչպես ես պատկերացնում երիտասարդի առօրյան և արդյո՞ք արցախցի երիտասարդը ունի ինքնադրսևորվելու լիարժեք պայմաններ:

-Կարծում եմ՝ յուրաքանչյուր երիտասարդ հենց ինքը կարող է ստեղծել պայմաններ ինքնադրսևորվելու համար: Իմ պատկերացմամբ երիտասարդի առօրյան պետք է լցված լինի աշխուժությամբ և անընդհատ ինչ-որ բան պրպտելու, գտնելու փորձերով:

- Ըստ քեզ՝ որո՞նք են երիտասարդի օրը բովանդակալից և արդյունավետ անցկացնելուն խանգարող հանգամանքները:

- Կարծում եմ՝ երիտասարդի համար չպետք է լինեն խանգարող հանգամանքներ կամ որևիցե արգելքներ, քանի որ երիտասարդը իր բնույթով պետք է լինի կարծրատիպեր կոտրող և բոլոր տեսակի արգելքներն ու փորձությունները հաղթահարող: Իսկ օրը բովանդակալից և արդյունավետ անցկացնելու համար յուրաքանչյուր երիտասարդ կարող է հենց ինքը իր օրը լցնել դրական լիցքերով և տեղ չտալ բացասական որևէ էներգիայի:

- Ի՞նչ կցանկանայիր փոխել, որպեսզի երիտասարդությունը կարողանա կարևոր դեր խաղալ հասարակության առջև ծառացած խնդիրների լուծման գործում:

- Ամենից առաջ կցանկանայի մեր հասարակական և պետական կառույցներում ընդլայնել երիտասարդ կադրերի ներգրավվածությունը, քանի որ երիտասարդներն իրենց հետ թարմություն ու ավելի ժամանակակից մտքեր են բերում, ունեն հասարակության առջև ծառացած բոլոր խնդիրները լուծելու վճռականություն ու ներուժ:

- Եթե հնարավորություն ունենայիր ավելի գեղեցկացնելու և հետաքրքիր դարձնելու երիտասարդների առօրյան, ինչի՞ց կսկսեիր:

-Ես կսկսեի ժամանցային միջոցառումների, ինտելեկտուալ խաղերի, երիտասարդությանը հետաքրքրող հարցերի շուրջ քննարկումների, բանավեճերի կազմակերպումից: Մի խոսքով՝ ամեն ինչ կանեի երիտասարդների շրջանում հետաքրքրության շրջանակներն ընդլայնելու համար:

- Ի՞նչ կմաղթեիր մեր երիտասարդներին:

- Մեր երիտասարդներին կմաղթեմ, որ իրենց թանկագին ժամանակը անտեղի չվատնեն, քանի որ երիտասարդ տարիները ամենաարժեքավոր տարիներն են: Երիտասարդներին խորհուրդ կտամ չառաջնորդվել ուրիշի կարծիքով, այլ ունենալ սեփական կարծիքը: Բոլոր երիտասարդներին կմաղթեմ հաջողություն իրենց կարիերայում, թող շատ գրքեր կարդան, չսահմանափակվեն բուհում ստացած գիտելիքներով: Երկրի ապագան մեր ձեռքերում է, ուրեմն պետք է լծվենք լուսավոր ապագա կերտելու գործին ու առաքելությանը:

Նանե Հարությունյան
լրագրություն 2-րդ կուրս

«ԻՆՉՊԵ՞Ս ԳՐԵԼ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾ» ԽՈՐԱԳՐՈՎ ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Այս օրերին ԱրՊՀ բանասիրական, պատմության և իրավագիտության, մանկավարժության և սպորտի, տնտեսագիտության և բնագիտական ֆակուլտետներում ուսանողական գիտական ընկերությունների նախաձեռնությամբ կազմակերպվել են «Ինչպե՞ս գրել գիտական հոդված» խորագիրը կրող սեմինար-պարապմունքներ:

Սեմինարի ընթացքում բանախոսներն ուսանողներին ներկայացրել են, թե ինչ է գիտական հոդվածը, ինչ կառուցվածքային մասերից է բաղկացած այն, ինչպես նաև հոդվածի գիտական պահանջները, այն գրելու նախապատրաստական քայլերը:

«Դասընթացի ժամանակ քննարկվել են գիտահետազոտական աշխատանքներ կատարելու սկզբունքներն ու առանձնահատկությունները, հետազոտական աշխատանքներին ներկայացվող պահանջները, այն իրագործելու փուլերը»,- ասել է մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ Ալիսա Խաչատրյանը՝ հավելելով որ դիտարկվել են նաև այն թերացումները, որոնք հաճախ հանդիպում են ուսանողների կատարած գիտահետազոտական, կուրսային, ավարտական աշխատանքներում և թեզերում, ապագայում նմանօրինակ թերացումներից խուսափելու նպատակով:

Ո՞Վ Է ՀԱՅ ԿԻՆԸ

Հայ կնոջ գեղեցկությունը տաղանդաշատ նկարիչը կանվաներ դասական և կատարյալ: Դա հատկապես այն գեղեցկությունն է, որ զննելիս ներշնչվում ես հավատով, տեսնում կանոնավոր դիմագծեր: Նրա շքեղ ու փայլուն վարսերը, հազարերազ ու հազարագույն աչքերը, քչախոս շուրթը և երիտասարդ մարմնի բոլոր շարժումները ձուլված են իրար, կազմել են մի ամբողջականություն, ներդաշնակ մի ակորդ, որի համար բնությունը ամենափոքր չափով անգամ չի սխալվել:

Ա. Չեխով



Դու՝ ինչպես ծաղիկ, որ հավերժական սիրով է պտղում...

Դու լայնախոհ ես, շրջահայաց, ոչ միայն իրավունք չունես, այլև դատապարտված ես նեղմիտ չլինելու:

Դու ազգ փրկող արքայադուստր Ծովինար ես եղել, եղբայր փրկող արքայաքույր Տիգրանուհի: Արժանապատվության դասեր ես տվել արքաներին դշխուհի Փառանձեմի նման, խիզախության դասեր՝ Անիի հերոսուհի Այծեմնիկի նման, վտանգի պահին Սոսե ես դարձել՝ արծվասիրտ նվիրյալ ազատության: Իսկ երբ սպառվել է մաքառելու ամեն մի հնար, դու անձնասպան ես եղել՝ ոսոխի պիղծ հպումներից զերծ մնալով, գետերի, անդունդների խորքերում պահ տալով քո անմեղությունը...

Անշու՛շտ: Ժամանակը դանդաղ է փոխում ազգային հոգեբանությունը: Ինչքան էլ վազենք քաղաքակրթության հետևից, միևնույն է, էլի հայ կնոջ մեջ ենք փնտրելու ու գնահատելու խոհեմությունն ու առաքինությունը...

Հանապազօրյա վազքի մեջ դու մոռանում ես անձնական կյանքդ՝ անվերապահորեն նվիրվելով ընտանիքիդ:

Այսպիսին ես եղել, այսպիսին ես լինելու, հերոսածի՛ն էակ: Սիրում ես գեղեցիկը, պարկեշտությունը, ավանդականը: Ատում ես դավաճանությունը, հավատարմության չափանիշ ես ամբողջ աշխարհում: Ցանկության դեպքում կարող ես թե՛ գերել, թե՛ նվաճել, բայց չես կիրառում պահեստի զենքերդ:

Որքան արցունք ես թափում մինչև որդիդ բանակից դառնում է տուն, քանի անքուն գիշերներ ես անցկացնում զավակներիդ ու թոռներիդ սնարի մոտ, մինչև նրանք դալար շիվից հասուն բալենի են դառնում... Ծաղկում, պտուղ են տալիս, արմատ խորացնում, բայց դու էլի քո խնամքից չես զրկում նրանց...

Մարդ լինելը դժվար է, կին լինելը՝ առավել ևս:

Շնորհավոր Ձեր տոնը, սիրելի՛ կանայք և աղջիկներ:

Մերի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
լրագրություն 3-րդ կուրս

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԵՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝«ԱՌՈՂՋ ԱՊՐԻՐ» ԽՈՐԱԳՐՈՎ

Մարտի 7-ին ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետի կենսաբանություն 3-րդ կուրսի ուսանողները նույն ֆակուլտետի ՈՒԽ-ի աջակցությամբ կազմակերպել են «Առողջ ապրիր» խորագրով միջոցառում, որի ընթացքում ուսանողները իրենց ելույթներով կարևորել են առողջ ապրելակերպի անհրաժեշտությունը և տեղեկություններ հաղորդել մարմնի խնամքի, ճիշտ սննդակարգի մասին:

«Ժամանակակից կյանքի պայմանները, որոնց անմիջական կրողն ենք հանդիսանում մենք, հանգեցրել են նրան, որ ակտիվ կյանք վարելը, վնասակար սովորություններից հրաժարվելը, օրվա ռեժիմի պահպանումը, ռացիոնալ սննդի օգտագործումը դարձել են կյանքի հրամայական»,- ասել է կենսաբանության 3-րդ կուրսի ուսանողուհի Անգելինա Հարությունյանը՝ ընդգծելով, որ առողջ ապրելակերպ վարելը նպաստում է մտավոր գործունեության հաջողությանը և աշխատունակության բարձրացմանը:

ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Մարտի 27-ը աշխարհում նշվում է որպես թատրոնի միջազգային օր և որպես տոն՝ թատրոնի աշխատողների համար: Այս տոնն ավանդաբար նշվում է «Թատրոնը որպես ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման և փոխըմբռնման միջոց» խորագրով: Օրն առիթ է՝ ևս մեկ անգամ անդրադառնալու Ստեփանակերտի թատրոնին, խնդիրներին և շնորհավորելու ոլորտի նվիրյալներին:

Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի շենքում բացակայում են տարրական պայմանները, այն վտանգավոր է նույնիսկ հասարակ ելումուտի համար: Արտաքինից շքեղ թվացող այս շենքը արդեն երկար տարիներ է, ինչ հատուկ ուշադրության կարիք է զգում: Սակայն թատրոնի անձնակազմը չի կորցնում հույսը, որ մի օր կունենա մշտական տեղակայման վայր: Շենքի վերանորոգման հարցը հատկապես կարևոր է Ստեփանակերտի բնակիչների համար: Այն մշակութային արժեք պահպանող օջախներից է, որը տասնամյակներ շարունակ գերել է հանդիսատեսին: Արցախյան թատրոնի վերելքին հաջորդեցին գոյամարտի տարիները, որի ժամանակ ռեժիսորները շարունակում էին թափվող արկերի տակ բեմադրություններ դնել, իսկ դերասաններն էլ իրենց հերթին փորձում էին իրենց խաղով մարդկանց կտրել առօրյա հոգսերից:

Օրվա առթիվ շնորհավորելով թատրոնի նվիրյալներին՝ մաղթում եմ, որ մոտ ապագայում լուծվեն ոլորտի առաջնահերթ խնդիրները, և արցախցի թատերասերները կրկին հնարավորություն ունենան թատրոնի լեփ-լեցուն դահլիճներում վայելել ներկայացումներ:

Անգելինա ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ,
լրագրություն 4-րդ կուրս:

ԱՇԽԱՐՀԻ ԲՈԼՈՐ ՓՈՔՐԻԿՆԵՐՆ ԱՆՄԵՂ ԵՆ

Նամակ փոքրիկ Արաքսին, որ ապրում է մինչև այսօր

Ստեփանակերտը թափանցիկ քաղաք է: Մառախուղ: Մշտապես: Արդեն 3 օր է՝ այսպես ասած ամպերի մեջ եմ ապրում: Քեզ ծյան, անձրևի, արևի մեջ հիշում եմ, մառախուղի մեջ չեմ հիշում: Երևի խելքը գլխին նամակներն այսպես չեն սկսվում...ինչ արած, գոնե դու, գոնե ինձ պետք է ներես: Ինչ-որ բան այն չէ, զրուցել է պետք՝ հենց ու միայն քեզ հետ: Հիմա իմ վարձած բնակարանի պատուհանից ո՛չ ինը հարկանիներ են երևում, ո՛չ լեռներ: Քեզ մեկ բարձրահարկի պատուհանից նայելիս եմ հիշում՝ ամռան գիշերներին, մեկ՝ լեռների մեջ՝ ինը հարկանիներից շատ ավելի բարձր: Դու կարգին տեսողություն ունես, ես կարգին լավատես եմ...Պատուհանից հիմա քիչ եմ նայում: Բացի այդ, Ստեփանակերտում լույսերը կարծես ավելի շուտ են հանգում:

Մարդիկ այստեղ իրենց քաղաքի նման են՝ երիտասարդ: Հենց զգան սուտ չես, կսիրեն քեզ ու չեն մոռանա...Միայն թե կատակը քիչ է: Երբեմն թվում է՝ շրջապատում ամենից շատ ես եմ կատակում...Դե, պատկերացրու: Առանց կատակ ապրելը մի բան չէ: Տխուր է ստացվում:

Դու ուզում էիր, որ ես շատ ընկերներ ունենամ, որ իմ օրերը հագեցած լինեն աշխատանքով, անվերջ բացահայտումներով, անվերջ սիրով: Ինձ համար հորինում էիր իմ կյանքը: Հիմա ինձ ազատ ես թողել քո գծած ճանապարհին: Կպատկերացնեի՞ր ինձ համար այսպիսի միայնության ժամեր այն ամենի հետ մեկտեղ, ինչն արդեն ունեմ:

Շաբաթը երկու անգամ երթուղային տաքսուն սպասելիս կարդում եմ կանգառի միակ ու հիմար հայտարարությունը՝ գեղեցիկ կազմվածք ունենալու համար պետք է զանգահարել նշված հեռախոսահամարով ու հաճախել դասընթացների: Վերջերս դա էլ չի երևում, չկա: Ճիշտն ասած առանձնապես չեմ տխրել: Կարևորը՝ երթուղայիններ միշտ լինելու են: Ականջակալներիս մեջ Beatles-ը երգում է՝ "Life is very short and there's no time": Ես նշանակված ժամից արդեն ուշացած նստում եմ ավտոբուս՝ «բա, my friend» դեմքով ու երջանիկ:

Մեր friend-ները համացանցում են շատ, իրականում քիչ են, շատ, շատ քիչ: Իսկապես:

Բայց մի՞թե դու չգիտես այս ամենի մասին, չէ՞ որ ինձ հետ ես, երբ աշխատում եմ, երբ կատակում եմ, սպասում եմ կանգառում, մառախուղի մեջ անգամ: Խնդրում եմ ուրեմն երբեք, երբեք, երբեք չլքես ինձ: Դու, որ ներում և չես չարանում: Դու, որ օգնում և ուրախանում ես: Թող զգամ քո ներկայությունը, երբ հաղթեմ և երբ սխալվեմ: Խնդրում եմ, կբռնես իմ ձեռքը, եթե մի օր հանկարծ փորձեմ դադարել սիրել կամ կորցնել հավատս: Ես ուզում եմ քեզ նման ազնիվ լինել, երբ մենք նորից հանդիպենք:

Հ.Գ.

(Հեղինակը կարծում է, որ քանի դեռ մեր մեջ ապրում է մանկությունը, մենք շարունակում ենք սիրել, հավատալ, փորձել լինել բարի: Կյանքի վերջում վերադառնում ենք ինքներս մեզ, և երևի լավ կլինի պահպանել այն հատկանիշները, որոնցով ի սկզբանե օժտված ենք բոլորս: Աշխարհի բոլոր փոքրիկներն անմեղ են):

Արաքս Միրզոյան
լրագրություն 3-րդ կուրս

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ. ԱՆՆԱ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ՀԱՄԱՐ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍԱԿԵՐՊ Է

Լրագրությունն ինձ համար մասնագիտություն չէ, այլ՝ առաքելություն, իսկ մեր զրուցակից Աննայի համար լրագրությունը կենսակերպ է: Այն մի ուրիշ, հետաքրքիր աշխարհ է, որտեղ նա իրեն զգում է ինչպես ձուկը ջրում: Իր այդ աշխարհում Աննան ունի բոլոր գույները, բայց, նրա խոսքով, գերակշռում է վարդագույնը:

Իսկ թե ինչպե՞ս առաջացավ սերը լրագրության հանդեպ, պատմում է. «Վեցերորդ դասարանում էի, երբ ծնվեց սերս դեպի լրագրություն: Ընտանեկան մրցույթի էինք մասնակցել ու հաղթել, և պետք է մեր ընտանիքից որևէ մեկը հարցազրույց տար: Եվ ես, չգիտես ինչու, ոգևորված մոտեցա, հարցերին պատասխանեցի ու երկու օր իրար հետևից հարցազրույցներ էի տալիս: Հետո Երևանում մասնակցեցինք եզրափակիչ փուլին ու նորից հարցազրույցներ, լրագրողներ, տեսախցիկներ, և ես հետաքրքրվեցի ու իսկապես սիրահարվեցի այդ մասնագիտությանը»:

Ապագա լրագրողի ստեղծագործական առաջին քայլերը դպրոցում են եղել. «Շարադրություններ, բանաստեղծություններ, հեքիաթներ: Դպրոցական տարիներին հիմնականում «Լուսայգ» թերթին էի նյութեր տալիս, հետո նաև շրջանային «Ամարասին»: Այդպես ծնվեց իմ սերն, ու ես ինձ ուրիշ ոլորտում չպատկերացրեցի»:

Այո՛, հետաքրքրվեց, սիրեց և իհարկե ընդունվեց համալսարան: Այժմ Աննան սովորում է Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի լրագրություն բաժնի երրորդ կուրսում: Աննայից հետաքրքրվեցինք, թե ընդունվելով ԱրՊՀ, որքանով արդարացան նրա սպասումները. «Լրիվ այլ պատկերացումներ, սպասումներ ունեի: Մտածում էի, որ բոլոր դասախոսները պետք է մասնագետներ լինեն, հայտնի լրագրողներ: Բայց առաջին կուրսում, երբ գրականության մասնագետը մեզ մասնագիտական առարկա էր դասավանդում, մի տեսակ հիասթափություն ապրեցի: Բայց իհարկե հաջորդ տարիներին իրավիճակը փոխվեց. նոր մասնագետներ, դասընթացներ, շփումը գործող լրագրողների հետ, որոնք տարիների փորձ ունեն, նրանցից խորհուրդ ստանալ, օրինակ վերցնել... և սերս մնաց նույնը»:

Դպրոցական տարիներին Աննային հեռուստատեսությունն է գրավել, բայց հիմա կարծում է՝ որտեղ էլ որ լինի՝ կաշխատի: «Կարևորը աշխատանք լինի՝ կհամակերպվեմ: Ես գիտեմ, որ միայն լրագրողի աշխատանքով չես կարող ընտանիք պահել: Այստեղ կարևորը գումարը չէ, այլ աշխատանքը, որը դու սիրով ես անում: Ես պատրաստ եմ մի բան սիրով անել և գումար չստանալ»:

Նախորդ ուսումնական տարում Աննան եղել է բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահը: Այս տարի նա թողել է այդ պաշտոնը. պատճառները պարզաբանում է. «Չէի հասցնում դասերիս հետ, բավականին հետադիմել էի: Ավելի շատ ժամանակ էր պահանջում ինձնից ֆակուլտետի ՈՒԽ նախագահ լինելը, ինչի արդյունքում տուժում էր ուսումնագիտական կողմը: Բայց այդ ժամանակահատվածում ունեցա շատ ծանոթություններ, ոչ միայն մեր համալսարանում, այլև Հայաստանի տարբեր բուհերում»:

Նա համաձայն է այն տեսակետի հետ, որ մարդու կյանքում անմոռանալի են ուսանողական տարիները:

«Ուսանողական տարիները շատ տպավորիչ են, հետաքրքիր, ոչ մի բան այս տարիներին չի փոխարինի: Ուսանողներ կան, որ տնից գալիս են համալսարան, համալսարանից՝ տուն, բայց ես կողմ չեմ այդ ամենին: Ինքս բնավորությամբ ակտիվ անձնավորություն եմ և կարծում եմ, որ ուսանողները պետք է ակտիվ լինեն: Ուսանողական ակտիվը պետք է համախմբված լինի, անընդհատ հանդիպումներ, միջոցառումներ կազմակերպեն, մասնակցեն: Մեզանից յուրաքանչյուրը կարող է իր ուսանողական օրը հետաքրքիր անցկացնել»:

Եվ, ի վերջո, լրագրող ծնվո՞ւմ են, թե՞ դառնում հարցին Աննան պատասխանում է. «Միանշանակ լրագրող ծնվում են...Ինչքան էլ ձգտի, փորձի կամ սովորի, միևնույն է, եթե ի վերուստ մարդն օժտված չէ լրագրող լինելու առաքելությամբ, չի կարող դառնալ լիարժեք լրագրող, և լրագրողի աշխարհը խորթ ու անծանոթ է մնալու»:

Մարինե Բալասանյան,
լրագրություն 3-րդ կուրս